

# ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ՆԻՍՏ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՔԱՌԱՍՆԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

Մայիսի 6-ին, շաբաթ օրը, առավոտյան ժամը 10-ին, Ալեքսանդր Սպենդիարյանի անվան Լենինի շքանշանակիր օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնում տեղի ունեցավ հոբելյանական հանդիսավոր նիստ՝ նվիրված Հայաստանում սովետական կարգերի հաստատման 40-ամյակին:

Վերածնված հայ ժողովրդի ազգային մեծ տոնին ներկա էր ՍՍՌՄ Մինիստրների Սովետի Նախագահ Նորին Գերազանցություն Նիկիտա Սերգեևիչ Խրուշչովը:

Հոբելյանական հանդիսավոր նիստին ներկա էր նաև Ազգիս Վեհափառ Հայրապետը՝ Նորին Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Կաթողիկոսը:

Հայաստանում սովետական կարգերի հաստատման քառասնամյակի հոբելյանական հանդիսավոր նիստին ներկա էին եղբայրական ռեսպուբլիկաների պատվիրակություններ և արտասահմանից հայ հյուրեր:

